ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ ՔԱՐԱԳՈՐԾ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԳՐԵՐԸ

ՍՏ. Խ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Միջնադարյան Հայաստանում շինարարական գործի կազմակերպման եղանակների մասին շատ սակավ են մատենագրական տեղեկությունները և այս տեսակետից էլ առաջնակարգ հետաքրքրություն են ներկայացնում քարագործ վարպետների նշանագրերը, որոնք հանդիպում են և՝ Հունաստանում[1], և՝ Պարսկաստանում[2], և՝ Սիրիայում[3], և՝ Վրաստանում[4]։ Հայաստանում նշանագրեր հանդիպում են արդեն հելլենիստական շրջանի կառուցվածքներում։ Գառնիի հեթանոսական տաճարի քարերի վրա հանդիպող նշանագրերը պատկերված են հունական այբուբենի տառերի ձևերով։ Նշանագրեր կան նաև հետագա շրջանների հուշարձաններում (IV—V դարեր), սակայն նրանց թիվը հատկապես բազմանում է VI—VII դարերում, ընդ որում նրանց ձևերի մեջ նկատվում է որոշակի միասնություն։ IX—XI դարերին պատկանող հուշարձանների վրա նշանագրերի բնույթը որոշ չափով փոխվում է, իսկ քանակը՝ նվազում։ Սակայն պետք է նշել, որ այստեղ ևս հանդիպում են որոշ նշանագրեր, որոնք հայտնի են VI—VII դարերում։ Դրանց ուսումնասիրությանը հատկապես անդրադարձել է Թորոս Թորամանյանը, որը մի առանձին հոդված է նվիրել Զվարթնոցի նշանագրերին։ Նա գրում է, որ Վոգյուեի և Դիուլաֆուայի բերած նյութերի հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացության։

«Ի հնումն, շենքի ճարտարապետները քարտաշների վերաբերյալ գործերը զանազան մասերի բաժանելով յուրաքանչյուր մասը հանձնում էին առանձին կարող վարպետների, որոնց պարտականությունն էր նույն այդ մասի պատը շինելը և թե քարերը տաշելով տեղը շարելը. այս միջոցին յուրաքանչյուր վարպետ իր շինած պատի վրա տաշած քարերի նշանները փորագրելուց հետո շարում էր պատի մեջ։ Գործն ամբողջացնելուց հետո չափում էին նրանց նշաններով տաշված քարերը և ըստ այն տալիս էին ընդհանուր աշխատավարձը»[5]։ Ըստ Թորամանյանի, աշխատանքի կազմակերպման այս նույն ձևն էլ ընդունված է եղել Հայաստանում։

---

[1] *Օ. Шуази*, История архитектуры, т. I, Москва, 1937, էջ 148։

[2] *Vogüe M.*, La Syrie Centrale, t. I, Paris, 1865—1877, էջ 65։

[3] *Dieulafoy M.*, L'Art Antique de la Perse, t. I, Paris, 1885, էջ 11։

[4] *Г. Н. Чубинашвили*, Памятники типа Джвари, Тбилиси, 1948, էջ 67։

[5] Թ. Թորամանյան, *Զվարթնոց եկեղեցու քարերի նշանները*, Տեղեկագիր ՀԽՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, № 2, Երևան, 1927, էջ 3։

Թորամանյանը սակայն շատ ավելի առաջ է գնում և նույնիսկ հնարավոր համարում այդ նշանների հիման վրա որոշել տաճարի շուրջը թափված բազմաթիվ քարերի սկզբնական տեղերը։ Նա հիշատակում է, որ Զվարթնոցում «...պատերից անջատված և կուտակված քարերի վրա եղած նշանները մասնագիտորեն քննելով ամենևին դժվար չէ որոշել, թե շենքի որ մասերին էին պատկանում նույն քարերը։ Զվարթնոցի ավերակներն այցելողները, եթե հետաքննին աչքով նայեն, ամեն քայլափոխում կտեսնեն քարի վրա խազված նշանները, բայց միայն մասնագետին հասկանալի է, թե որ մասին են պատկանում սույն քարերը»[1]։

Ինչպես կտեսնենք ստորև, Թորամանյանի այստեղ բերված տեսակետներից և ոչ մեկը չի հաստատվում փաստական նյութերով և նրա դրույթները նշանագրերի մասին կարոտ են հիմնական վերանայման։ Վարպետների նշանագրերին անդրադառնում են նաև մի շարք այլ հեղինակներ։ Այն ժամանակ, երբ Բ. Առաքելյանը[2] և Վ. Հարությունյանը[3] հիմնականում բաժանում են Ն. Մառի տեսակետը արհեստավորական ցեխերի (ըստ Բ. Առաքելյանի— խմբերի) գոյության մասին, Կ. Ղաֆադարյանը[4] և Վ. Աբրահամյանը[5] լիովին հետևում են Թորամանյանին։

Այս կապակցությամբ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Գրիգոր Նյուսացու (IV դարի վերջ) նամակը ուղղված Իկոնիայի եպիսկոպոսին, որտեղ նա անդրադառնալով շինարարական աշխատանքների կազմակերպման ձևերին, պահանջում է, որ աշխատողների հետ կնքած պայմանագրում հատկապես նշվեն աշխատանքային օրվա նորմաները, որովհետև ինչպես նա է գրում, բանվորները «...միայն ժամանակ կանցկացնեն և առանց ցույց տալու իրենց օրվա արտադրանքը, կպահանջեն իրենց աշխատավարձը»[6]։ Թվում է, թե այս հարցում իրավացի է Ա. Յակոբսոնը, որը գրում է. «...այս վկայությունը թեև վերաբերում է IV դարի վերջի Փոքր Ասիային, սակայն հարևան Հայաստանում ևս, որտեղ սոցիալական և տնտեսական իրադրությունը հավանաբար քիչ բանով էր տարբերվում, դժվար թե գերիշխեր շինարարական աշխատանքների կազմակերպման մի այլ ձև, քան վերը նշվածը։ Հայ քարտաշ վարպետների նշանները անուղղակի կերպով հենց այդ են հաստատում»[7]։

* * *

V—VII դարերի հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած հատակագծային և ծավալային կոմպոզիցիաների մեջ նկատվող բազմապիսի ձևերին, այդ շրջանի հուշարձանները աչքի են ընկնում իրենց ոճական միասնականությամբ, ընդ որում համանման կառուցվածքներում անժխտելի է համաչափությունների մի որոշակի սիստեմի կիրա-

[1] Թ. Թորամանյան, Նշվ. աշխ., էջ 6։

[2] Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV—VII դարերում, Երևան, 1951, էջ 74։

[3] *В. Арутюнян*, По поводу датировки храма в Аруче, Ереван, 1946, էջ 29։

[4] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 101։

[5] Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում, Երևան, 1956, էջ 225։

[6] „Творения Григория Нисского", Москва, 1871, էջ 539։

[7] *А. Л. Якобсон*, Очерк истории армянского зодчества IV—XVII веков, Москва, 1951, էջ 12։

ռումը։ Կուլտային կառուցվածքների տեղաբաշխման և նրանց ձևերի հարցը միշտ էլ եղել է հայկական եկեղեցու ուշադրության առարկան և նրանց նկատմամբ ունեցած վերահսկողության մասին տեղեկություններ ունենք արդեն ամենավաղ շրջանից։ Այսպես, մեր մատենագրության մեջ հանդիպող «Սրբոց հարց հետևողաց» կանոններում այդ մասին կարդում ենք հետևյալը (կանոն 25).

«Եկեղեցու հիմքը ծրագրելու իրավունքը պատկանում է եպիսկոպոսին, կամ արքեպիսկոպոսին և կամ եպիսկոպոսի հրամանով պերեատուին, եթե հակառակ այս կարգի դնան, հիմքը պիտի քանդել և թույլ չտալ եկեղեցի շինել»[1]։ Հայկական եկեղեցու կողմից կուլտային շինարարության նկատմամբ ունեցած վերահսկողության մասին որոշակի տեղեկություններ են պահպանվել արդեն քրիստոնեության տարածման առաջին դարերից։ Այսպես, Աշտիշատի ժողովի (365) ընդունած որոշումներից պարզ է դառնում, որ եկեղեցին ծավալել էր զգալի շինարարական գործունեություն, երկրի բազմաթիվ մասերում հիմնելով որբանոցներ, հյուրանոցներ և կատարելով հատկապես վանական կառուցումներ։ Կասկած չի կարող լինել, որ այս ամբողջ շինարարությունն ընթանում էր եկեղեցու անմիջական վերահսկողության տակ։ Տաճարաշինարարության նկատմամբ ունեցած վերահսկողության հարցը քննության առարկա է դառնում Շահապիվանի ժողովում (447), որտեղ ընդունված կանոններից ԺԵ կանոնը հատկապես վերաբերում է այդ հարցին. այնտեղ կարդում ենք հետևյալը.

«Եթէ ոք զնշխարհս մարտիրոսի կամի դնել, առանց եպիսկոպոսի աշխարհին մի դիցէ, զյիշատակ մարտիրոսաց և զժողովս առանց եպիսկոպոսի հրամանի մի ոք իշխեսցէ առնել։ Եւ եթէ ոք ի սուրբ տեղեաց մարտիրոս բերցէ, առ եպիսկոպոսն տարցէ վկայութեամբ և թղթով եպիսկոպոսացն, ուստի եբերն և իւրեանց եպիսկոպոսին հրամանաւ դիցէ՝ ուր արժան է դնել։ Եթէ ոք սեղան կամիցի կանգնել տէրունական խորհրդին, առանց եպիսկոպոսին մի ոք իշխեսցէ»[2]։

Որ այս հարցը իսկապես էական նշանակություն ուներ եկեղեցու համար, ցույց է տալիս այն հանգամանքը, որ նրան անդրադառնում են նաև Պարտավի ժողովում (771)[3], և այն իր որոշակի տեղն է գտնում Մխիթար Գոշի Դատաստանագրքում[4]։

Այս բոլորից հետո կարելի է եզրակացնել, որ միջնադարյան Հայաստանում, ամենայն հավանականությամբ, գոյություն է ունեցել կուլտային կառուցվածքների շինարարության վերահսկողության ինստիտուտ և հոնձինս դավառական եպիսկոպոսներին անմիջապես ենթակա ճարտարապետների, հայ եկեղեցին դարեր շարունակ ղեկավարել և ուղղություն է տվել եկեղեցական շինարարությանը։

Անցնենք այժմ բուն շինարարական աշխատանքների կազմակերպման հարցերին։ Շինարարական աշխատանքների կազմակերպման մասին դժբախտաբար շատ սակավաթիվ հիշատակությունների ենք հանդիպում մեր մատե-

---

1 Ն. Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, Շուշի, 1903, էջ 483։

2 Ա. Դլոնյան, Կանոնագիրք հայոց, Թիֆլիս, 1914, էջ 78։

3 Նույն տեղում, էջ 167։

4 Վ. Բասամյանց, Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 142։

նագրության մեջ։ Նկարագրելով Շամիրամի շինարարական գործունեությունը, Մովսես Խորենացին գրում է, որ նա «...հրաման տայ չորից բիւրոց և երկուց հազարաց արանց անարուեստից գործաւորաց յԱսորեստանեայց և յայլոց իշխեցելոց, և վեց հազար իւրոց ընտրելոց յամենայն արուեստաւոր գործաւորաց փայտի և քարի, սղնձոյ և երկաթոյ, որք ամենեքին կատարեալք իցեն յարուեստագիտութեան, ածել անխափան ի փափագեալ տեղին»[1]։

Մեզ համար այստեղ առավել ուշագրավն այն է, որ նկարագրելով այդ կառուցվածքները, Խորենացին շինարարական աշխատանքների կազմակերպման մասին խոսելիս օգտագործում է իր ժամանակաշրջանում գործածվող տերմինները—«անարուեստ գործաւորաց» և «արուեստաւոր գործաւորաց», այլ խոսքով ասած «սեւագործ» բանվորներ և որակյալ վարպետներ։ Ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում նաև բուն աշխատանքի կազմակերպման ձևերի նկարագրությունը, ըստ որի՝ Շամիրամը «...հրամայէ զամբոխն ի բազում դասս որոշել, և ի վերայ իւրաքանչիւրոց դասուց զընտիրս ի ճարտարացն վարդապետս կարգել»[2]—աշխատանքի կազմակերպման մի ձև, որն անշուշտ կար և Խորենացու ժամանակ, ու պահպանվելով տասնյակ դարերի ընթացքում, հասել է մինչև մեր օրերը։ Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ մեկ վարպետին համապատասխանում էր յոթ «անարուեստ գործաւոր»—մի հարաբերություն, որը միանգամայն նորմալ է այնպիսի շինարարության ժամանակ, երբ ամեն ինչ կատարվում էր ձեռքով։ Ուշագրավ է, որ այս «անարուեստ գործաւորները» ևս բաժանված էին ըստ իրենց աշխատանքի բնույթի։ Այս մասին է վկայում Մովսես Կաղանկատվացու մի հիշատակությունը, որտեղ կարդում ենք հետևյալը. «...եւ տրտնջեալ առն միոյ ի քարակրացն»[3]։

Շինարարական գործի կազմակերպման մասին որոշ տեղեկություններ հաղորդում են նաև մյուս հայ պատմիչները։ Այսպես, Սերեոսը անդրադառնալով Դվինում Սմբատի շինարարական գործունեությանը, գրում է հետևյալը.

«Ապա սկսան արկանել հիմն եկեղեցւոյն. ժողովեաց ճարտարապետս քարի և կացոյց ի վերայ նոցա հաւատարիմ գործակալս, և հրաման եւ փութանակի հասուցանել ի կատարումն»[4]։

Մովսես Կաղանկատվացին, նկարագրելով Գրիգոր Պարթևին վերագրվող շինարարությունը Ամարասում՝ գրում է, որ նա «...արկանէր հիմն եկեղեցւոյ ի գիւղաքաղաքին Ամարասայ և կացուցաներ գործունեայս և հրամանատարս շինել եկեղեցին»[5]։ Մի այլ տեղ նա հիշատակում է, որ «...ահ մեծ յայնժամ արկանէր ի վերայ գործունէիցն և գործակալաց. և փութապէս երկիւղիւ գործէին կշինուած սուրբ եկեղեցւոյն»[6]։

Թովմա Արծրունին նշում է, որ Գագիկ թագավորը «...տայ զմթերս գանձուց ի ձեռս գործաւարաց և արուեստաւորաց՝ պարսպաւորել ամրութեամբ զբլուրս գագաթնաւորս և զանառիկ ամրոցս բերդից ի գաւառս և ի միջոցս երկրի...»[7]։

---

1 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913, էջ 52։
2 Նույն տեղում, էջ 53։
3 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 191[illegible], էջ 89։
4 «Սերեոսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939, էջ 65։
5 Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 45։
6 Նույն տեղում, էջ 89։
7 Թովմա վարդապետ Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 475։

Այս տվյալներից կարելի է եզրակացնել, որ շինարարությունն առհասարակ կատարվում էր գործակալների միջոցով, որոնք նշանակվում էին կտիտորի կողմից և ստանալով նյութական անհրաժեշտ միջոցներ, հավաքագրում էին տարբեր մասնագիտության վարպետների և սկսում աշխատանքը։ Կառուցվածքների բարձր որակը, նրանց ոճական միասնականությունը, համաչափությունների մտածված օգտագործումը, վկայում են միաժամանակ, որ հուշարձանները կառուցվել են բազմամյա փորձ ունեցող բարձրորակ վարպետների կողմից, որոնք մի կառուցվածքն ավարտելուց հետո ոչ թե ցրվել են, հեռացել, այլ նույն այդ հիմնական խմբով սկսել մի այլ շինարարություն։ Այս հիմնական խմբի ղեկավարը, ինչպես ցույց են տալիս բոլոր տվյալները, եղել է ճարտարապետը, որի աշխատանքը լիովին անջատված է մյուս վարպետների աշխատանքից։

Բացի հուշարձանի առանձին մասերի նշվարկումից և շինարարական աշխատանքների անմիջական վերահսկումից, ճարտարապետն էր, որ պետք է տար բոլոր կարևոր հանգույցների մոդելները և նրա ցուցմունքներով էր, որ առանձին որակյալ վարպետները պետք է պատրաստեին սովորական ձևերից շեղվող քարերի ձևանմուշները։ Որ հատկապես ճարտարապետն էր ղեկավարում, ուղղություն տալիս մնացած բոլոր վարպետների գործունեությանը, ցույց է տալիս նաև Թովմա Արծրունու մի հիշատակությունից, որտեղ նա գրում է.

«Եւ քանզի էին ի դրան արքունի գումարեալք արուեստաւորք բազումք, այր պատուաւորք ժողովեալք յամենայն ազգաց յերկրէ, որք ոչ վրիպէին առնել զոր խորհէր արքայ, այլ ըստ հրամանին վաղվաղակի և գործն առնոյր զկատարումն՝ ումեմն ի նոցանէ ճարտարապետի առն իմաստնոյ և հանճարեղի հրամայէ թագաւորն շինել տաճար մի քառանկիւն...»[1]։

Ճարտարապետի հիմնական գործիքներն էին լարը, քանոնը, կարկինը։ Հենց այդ մասին է վկայում Թովմա Արծրունու հետևյալ հիշատակությունը.

«Յայնժամ և իւր խոյ արքայի ամենիմաստ հասողութեամբն հանգերձ բազում արուեստաւորօք զլար ճարտարութեան ի ձեռն առեալ գծել, միանգամայն և դծագրել նշանակել առ ստորոտով լերինն, որ է գագաթն կղզոյն, զտեղիս զրօսացուցանողս վայելչաւորս, ըստ արժանի կայենից արքայական...»[2]։

Այս ամենից հետո դժվար չէ կռահել, որ ճարտարապետի աշխատանքն անջատված էր մյուս վարպետների աշխատանքից, և նա իրականացնում էր միայն ընդհանուր ղեկավարությունը։ Բացառված չէ միաժամանակ, որ առանձին դեպքերում որպես գործակալներ հանդես էին գալիս հենց իրենք՝ ճարտարապետները։ Այդպիսի եզրակացության հնարավոր է գալ Ստեփանոս Օրբելյանի մի հիշատակության հիման վրա, որը վերաբերում է Գնդեվանքի (936) շինարարությանը։ Նա գրում է, որ տաճարի կտիտորը, իշխանուհի Սոփիան «...կացուցեալ ի վերայ վանաց երէցն զհայր Սարգիս և գործակալ զԵղիշա երէց և նկարիչ»[3]։

---

[1] Թովմա Արծրունի, նշվ. աշխ., էջ 481։

[2] Նույն տեղում, էջ 480։ Կառուցվածքի նշվարկումը լարի միջոցով հիշատակվում է արդեն V դարի մատենագրության մեջ, ինչպես այդ տեսնում ենք Ագաթանգեղոսի մոտ, Հռիփսիմեի վկայարանի շինարարության նկարագրության ժամանակ։

[3] Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1911, էջ 260։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ճարտարապետի և այն վարպետների միջև, որոնք անմիջականորեն աշխատում էին շինարարության վրա, կար մի աստիճան ևս. դրանք վարպետների առանձին խմբերի ղեկավարներն էին, որոնց միջոցով ճարտարապետը իրագործում էր իր մտահղացումները։ Դեռևս Խորենացին հիշատակում էր, որ շինարարության վրա աշխատողները բաժանվում էին առանձին «դասերի» և որպես նրանց ղեկավարներ հանդես էին գալիս «զընտիրս ի ճարտարացն վարդապետս...»։ Բացի դրանցից, գործակալը ուներ նաև իր անմիջական օգնականները։

Իսկ թե ինչպես էին կոչվում այս կարգի աշխատողները, պարզ է դառնում Թովմա Արծրունու մի հիշատակությունից, ըստ որի տաճարի կառուցման ժամանակ ծախսված երկաթի քանակը նրան հաղորդել է «հաւատարիմ ոստիկան մի ի գործավարաց քաղաքին»[1]։

Շատ սակավաթիվ տեղեկություններ են պահպանվել նաև աշխատավարձի վճարման ձևերի մասին։ Մխիթար Գոշը, խոսելով արհեստավորների աշխատանքի մասին՝ գրում է հետևյալը.

«Արուեստաւորք ամենայն ըստ որում եւ իցեն արուեստի եթէ հատուածով գործիցեն եւ եթէ վարձով, յորժամ ոչ ըստ հաճոյից տեառն գործիցեն, այլ եւ զնիւթն ապականիցեն, դատաստանաւ է ըստ հաճոյից նոցա առնել դարձեալ, կամ զապականեալն ի գնոյն ըստ արժանւոյն լնուլ եւ ապա լիով հասանել վարձու»[2]։

Դրա հետ միասին չպետք է աչքաթող անել նաև այն հանգամանքը, որ միջնադարյան Հայաստանում լայն տարածում ուներ հասարակական մասշտաբի հարկադիր և անվճար աշխատանքը, որն արտահայտելու համար մատենագրության մեջ գործածվում են մի շարք տերմիններ, ինչպիսիք են «կոռ», «մարդահարկ», «բեկար», իսկ ավելի հնում՝ «խաշար»։

Հիշատակելով արաբական Եգիպտոսի ոստիկանի շինարարական գործունեությունը Կարինում, Ղևոնդը գրում է.

«Իսկ ի դալ միւսոյ ամին կազմեալ Եգիպտն զզօրսն որ ընդ ձեռամբ իւրով երթայր հասանէր ի քաղաքն Կարնոյ և արկանէր մարդահարկ ի վերայ աշխարհին. և հաւաքեալ զրազմութիւն անթիւ՝ կացուցանէր գործավարս ի վերայ գործոյն, և փոյթ յանձին կալեալ շինէր զխրամատեալ պարիսպ քաղաքին»[3]։

Համանման հիշատակությունների հանդիպում ենք նաև մյուս պատմիչների մոտ։

Ս. Հակոբյանը, քննարկելով միջնադարյան Հայաստանում եղած հարկերի հարցը, գրում է, որ բեկարը «...այն հարկադիր և ձրի աշխատանքն էր, որ անմիջական նյութական բարիքներ արտադրողներն իրենց սեփական աշխատանքով, աշխատամիջոցներով և քաշող ուժով կատարում էին բերդերի, ամրոցպալատների, ճանապարհների, կամուրջների շինարարության վրա...»[4]։

Դժվար չէ եզրակացնել, որ հենց այսպիսի հարկադիր ու ձրի աշխատանքի միջոցով էին կատարվում և՛ հողային աշխատանքները, և՛ շաղախի պատրաստման հետ կապված գործերը, և՛ հատկապես փոխադրական բոլոր աշխատանքները, որոնք առանձնապես մեծ դժվարություն էին ներկայացնում,

[1] Թովմա Արծրունի, Նշվ. աշխ., էջ 482։
[2] Վ. Բաստամյանց, Նշվ. աշխ., էջ 436։
[3] «Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 129։
[4] Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, Երևան, 1957, էջ 326։

եթե ի նկատի ունենանք, որ այն ժամանակ համարյա ամեն ինչ կատարվում էր ձեռքի ուժով։

Միայն հարկադիր աշխատանքի միջոցով էր հնարավոր լինում տաճարների վրա բարձրացնել այն հսկայածավալ քարերը, որոնց առկայությունը գետնից 15—20 մետր բարձրության վրա, այսօր էլ այցելուի զարմանքն է առաջացնում։

Բերված հիշատակությունների հիման վրա պարզ են դառնում շինարարական աշխատանքների ղեկավարման բոլոր ստորաբաժանումները։

Ստացվում է հետևյալ պատկերը։ Ամենից վեր կանգնած է գործակալը, որը նշանակվում է կտիտորի կողմից, ստանում համապատասխան միջոցներ և շինարարությունն ապահովում շինանյութերով։ Նրան անմիջականորեն ենթարկվում են ոստիկանները, որոնք հետևում են շինարարական աշխատանքների ընթացքին և կատարում աշխատանքի հաշվառումը։ Շինարարական աշխատանքները ղեկավարում է ճարտարապետը (փոքր կառուցվածքներում՝ գլխավոր վարպետը)։ Վարպետներն ըստ իրենց մասնագիտության բաժանված էին համապատասխան դասերի, որոնց ղեկավարները նշանակվում էին առավել որակյալ վարպետներից։

Սովորական քարտաշների աշխատանքից անջատվում էր նաև քանդակագործների աշխատանքը։ Այնպիսի գործեր, ինչպիսիք են Զվարթնոցի արծվաքոյակները և տաճարը շրջանցող խաղողի և նռան ֆրիզը, անշուշտ սովորական քարտաշ վարպետների գործեր չէին և կարող էին ստեղծվել միայն որակյալ քանդակագործների աշխատանքով[1]։ Այսպես, օրինակ, Զվարթնոցի խաղողի և նռան հայտնի բարձրաքանդակներից և ոչ մեկը չի կրկնված նույնությամբ, ընդ որում որոշակի կերպով նկատվում է այն ազատ մոտեցումը, որն ունեցել է վարպետը այդ կոմպոզիցիան ընտրելիս։ Կասկած չի մնում, որ հարթ սալի վրա նախօրոք ուղղակի նկարվել է ապագա բարձրաքանդակի ուրվագիծը և հետո, այդ ազատ կատարված նկարի հիման վրա, քանդակվել։ Պարզ է, որ այդպիսի բարձրարվեստ գործերի հեղինակները սովորական քարտաշներ չէին, և նրանց աշխատանքն անջատված էր շինարարության մյուս քարտաշների աշխատանքից։

Բայց բուն շինարարական աշխատանքի կազմակերպման պրոցեսը մնում է չպարզաբանված։ Ահա այստեղ է, որ մեզ օգնում են հուշարձանների վրա պահպանված նշանագրերը, որոնք գեթ մասամբ հնարավորություն են տալիս մոտենալ այս՝ մինչև այժմ չլուսաբանված հարցին։

Նշանագրերը ներկայացնում են 8—12 սմ. բարձրություն և 2—5 մմ. խորություն ունեցող գծվածքներ և սովորաբար փորագրված են քարի ճակատային կողմում, մեծ մասամբ նրա կենտրոնական մասում։ Բացառություն են կազմում կարկինով արված նշանագրերը, որոնք հաճախ ունենում են զգալի չափեր։ Որպես օրենք՝ մի քարի վրա արվում է մի նշանագիր, թեև առանձին, շատ հազվագյուտ դեպքերում նկատվում է երկու նշանագրի առկայություն միևնույն քարի վրա։

Նույնատիպ նշանագրեր հանդիպում են միանգամայն տարբեր կոնստրուկտիվ նշանակություն ունեցող քարերի վրա, և այս տեսակետից բնավ

---

[1] Բ. Առաքելյան, *Հայկական պատկերաքանդակները IV—VII դարերում, Երևան, 1949, էջ 96։*

հնարավոր չէ որևէ օրինաչափություն նկատել, թեև որոշ տեղերում կարելի է տեսնել միմյանցից ոչ հեռու, սովորաբար նույն կոնֆիգուրացիան ունեցող քարերի ոչ մեծ խմբեր (5—6 հատ), որոնք բոլորն էլ ունեն նույն նշանագիրը։

Այն հանգամանքը, որ նույնատիպ նշաններ հանդիպում են կառուցվածքի միմյանցից զգալի հեռավորության վրա գտնվող մասերում և, որ գլխավորն է, համարյա թե միևնույն բարձրության վրա, հիմնավորապես ժխտում է Թորամանյանի դրույթը՝ կառուցվածքը իբր տարբեր մասերի բաժանված լինելու և յուրաքանչյուր մասը մի վարպետի հանձնված լինելու մասին։

Յոթերորդ դարի բազմաթիվ հուշարձանների վրա հանդիպող նշանագրերի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց դասավորության մեջ բնավ հնարավոր չէ մի որևէ օրինաչափություն նկատել։ Կարելի է բերել տասնյակ օրինակներ, թե ինչպես պատի նույն շարքի մեջ մի տիպի նշանագրին կից հանդիպում է բոլորովին այլ տիպի նշանագիր, իսկ այդ երկուսն էլ, իրենց հերթին, շրջապատված են լինում առհասարակ նշանագրեր չունեցող քարերով։ Բացի այդ, հաճախ կարելի է տեսնել, ինչպես այդ նշանագրերը կրկնվում են այս անգամ արդեն միմյանցից շատ հեռու դասավորված տեղերում, հուշարձանի տարբեր անկյուններում, միանգամայն տարբեր կոնստրուկցիաների քարերի վրա։

Մինչդեռ եթե ընդունենք Թորամանյանի դրույթը կառուցվածքը առանձին մասերի բաժանված լինելու մասին, ապա նշանագրերի դասավորության մեջ ևս պետք է նկատվեր մի որոշակի օրինաչափություն և որպես օրենք, միմյանց կողքի պետք է որ դասավորված լինեին միայն և միայն համանման նշանագրեր, մի բան, որը չի նկատվում և ոչ մի հուշարձանի վրա։ Ճիշտ է, կան առանձին դեպքեր, երբ համանման կոնստրուկտիվ էլեմենտների որոշ քարեր, որոնք տաշվել են միևնույն օրինակի համաձայն և միևնույն չափերն ունեն, կրում են միևնույն նշանագիրը, սակայն պետք է ասել, որ այս դեպքերում էլ համանման նշանագրեր ունեցող և միմյանց մոտ դասավորված քարերի քանակությունը չի անցնում 5—6 հատից և նրանց կողքին անհամեմատ ավելի շատ են արդեն այնպիսի քարեր, որոնք առհասարակ զուրկ են նշանագրերից։

Իր դրույթները հիմնավորելու համար որպես հիմնական կռվան Թորամանյանն առաջ է քաշում Զվարթնոցի մույթերի գոգավոր խորշերի աստղանիշ նշանագրեր ունեցող քարերի օրինակը և գրում է հետևյալը.

«Հինգ թևով աստղ նշան ունեցող վարպետը ճարտար և հմուտ եղած է կոր և գոգավոր քարեր տաշելու և շարելու մեջ, որին հանձնվել է բացառապես շրջս գմբեթակիր մեծ մույթերի հետևի կիսաբոլորակ խորշերի և տաճարի արտաքին պատերի ներքին երեսների բոլոր (ընդգծումը մերն է—Ս. Մ.) կոր և գոգավոր քարերը տաշել և իրենց տեղը շարել, նմանապես սվաստիկա նշան ունեցող վարպետը տաշել և շարել է տաճարի ներսի երեսի վրա եղող որմնասյուներն իրենց խարիսխ և խոյակներով»[1]։

Եվ իրոք, երբ դիտում ենք նշված խորշերը, ապա դժվար չէ նկատել, որ նրանցից յուրաքանչյուրի վրա իսկապես կան 5—6 աստղաձև նշանագրեր ունեցող քարեր, որոնք որոշ տեղերում դասավորված են միմյանց մոտ, իսկ որոշ տեղերում՝ մեջընդմեջ, նշանագրեր չունեցող քարերի հետ միասին։ Եթե հետևենք Թորամանյանի դրույթներին, ապա կստացվի, որ նշված մույթերի բոլոր

[1] Թ. Թորամանյան, Նշվ. աշխ., էջ 6։

քարերն էլ տաշվել և տեղադրվել են միևնույն վարպետի կողմից և նույն վարպետն է, որ աշխատել է բոլոր մույթերի վրա և հերթականությամբ բարձրացրել նրանց։ Եվ դա բավական չէ, նույն այդ վարպետին է վերագրվում այնպիսի մի հսկայածավալ աշխատանք, ինչպիսին է տաճարի ներսի կորագիծ պատերի բոլոր քարերը տաշելը և տեղում տեղադրելը։

Չժիտելով այն տեսակետը, որ միևնույն հուշարձանում համանման նշանագրեր ունեցող քարերը տաշվել են նույն վարպետի կողմից, մենք վճռականապես դեմ ենք նրանց տեղադրումն էլ նույն այդ վարպետին վերագրելուն, որովհետև անհնար է պատկերացնել, որ մի քանի քար շարելուց հետո վարպետը, առանց ավարտելու իր աշխատանքը մի մույթում, դնար մյուս մույթը շարելու։ Բացի այդ նշանագրեր ունեցող քարերի կողքին անհամեմատ ավելի շատ են այն քարերը, որոնք բնավ չունեն նշանագրեր, իսկ դա ինքնին արդեն ժխտում է այդ հնարավորությունը։ Բնականաբար հարց է ծագում՝ ո՞վ է տաշել և ո՞վ է շարել նշանագրեր չունեցող քարերը։

Նշանագրերի բացակայությունն այս քարերի վրա արդեն հիմնովին ժխտում է նրանց ևս նույն այդ աստղաձև նշանագրերն ունեցող վարպետին վերագրելու հնարավորությունը, որովհետև միանգամայն անհասկանալի կմնա, թե ինչու մի քարի վրա նա արել է նշանագիր, իսկ մյուսի վրա՝ ոչ։ Եվ եթե, ըստ Թորամանյանի, այդ նշանագրերն են, որ պետք է հիմնական կռվան հանդիսանան նրա կատարած աշխատանքի հաշվառման համար, ապա այս դեպքում նրանք բոլորովին կորցնում են իրենց նշանակությունը, որովհետև ոչ մի կերպ հնարավոր չէ տարբերել, թե որտեղ է սկսվում և որտեղ վերջանում աստղաձև նշանագրեր ունեցող վարպետի շարած պատը։

Այս բոլորի հետ միասին, եթե վերհիշենք, որ աստղաձև նշանագրերով քարեր հանդիպում են Զվարթնոցում ոչ միայն մույթերի գոգավոր խորշերում, այլև շատ ուրիշ տեղերում, հիմնականում հատուկենտ քարերի վրա (տաճարի արտաքին պատի և արևմտյան ու արևելյան հատվածներում, տաճարի շուրջը սփռված գանազան բեկորների վրա, ընդ որում հանդիպում են ամենաբազմապիսի տիպի քարեր՝ և՛ գոգավոր, և՛ հարթ տաշած), պարզ կդառնա, որ միևնույն վարպետին վերագրել այս բոլոր քարերի ոչ միայն տաշելը, այլև տեղադրելը՝ կլինի խիստ անտրամաբանական։

Ոչ մի բանի վրա հիմնված չէ Թորամանյանի նաև այն դրույթը, ըստ որի՝ նշված խորշերի և արտաքին շրջանաձև պատերի ներքին երեսների բոլոր կոր և գոգավոր քարերը տաշվել և շարվել են միևնույն աստղաձև նշանագիրն ունեցող վարպետի կողմից։

Այսպիսի աշխատանք կատարելու համար նրան չէր բավականացնի նույնիսկ իր ամբողջ կյանքը, էլ չենք ասում այն, որ ըստ Թորամանյանի, նույն այդ վարպետը դեռևս շատ տեղերում պետք է լիներ և մասնակցեր VII դարի հայկական ճարտարապետության համարյա թե բոլոր կառուցվածքների շինարարությանը։

Չի կարելի համաձայնել Թորամանյանի՝ նույն կոնցեպցիայի վրա հիմնված մի այլ դրույթի հետ, ըստ որի սվաստիկաձև նշանագիր ունեցող վարպետն է, որ իրը տաշել և շարել է տաճարի ներսի երեսի բոլոր որմնասյուները իրենց խարիսխներով և խոյակներով։ Ճիշտ է, այդ որմնասյուներին պատկանող մի քանի քարերի վրա իրոք հանդիպում է այդ նշանագիրը, սակայն դա դեռևս ոչ մի հիմք չի տալիս մի վարպետի վերագրել այդ հսկայածավալ աշխատանքը։

Բավական է ասել, որ տաճարի ներսում եղել է 64 որմնասյուն, որոնց համարյա թե բոլոր քարերը տաշված են տաճարի լուսամուտների թեքություններ կազմող քարերի հետ միասին և ունեն բավականին բարդ կոնֆիգուրացիա։ Հաղիվ թե կարիք լինի մեկնաբանելու, որ հարյուրավոր այդպիսի բարդ քարերի տաշելն ու շարելը միևնույն վարպետին վերագրելը ոչ միայն չի հիմնավորված, այլև խիստ վեր է մի մարդու ֆիզիկական հնարավորություններից առհասարակ։

Չվիճարկելով Թորամանյանի այն դրույթը, թե հատկապես սվաստիկաձև նշանագիր ունեցող վարպետն է տաշել որմնասյունների քարերի մի մասը (և հատկապես այն քարերը, որոնց վրա հանդիպում է այդ նշանագիրը), մենք դարձյալ դեմ ենք նրանց տեղադրումը ևս նույն այդ վարպետին վերագրելուն, որովհետև նա ստիպված կլիներ մի որմնասյան վրա մի քար դնելուց հետո թողնել իր աշխատանքի վայրը և անցնել մյուս որմնասյանը, և այսպես շարունակ շրջել տաճարի ամբողջ ներքին պարագծով, մի բան, որը ոչ միայն անտրամաբանական է, այլև անհնար։

Այս բոլորից հետո դժվար չէ կռահել, որ Թորամանյանի դրույթները շինարարական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ և հատկապես նրա ենթադրությունները՝ կառուցվածքներն առանձին մասերի բաժանած լինելու և ամեն մասի բոլոր հիմնական աշխատանքները (քարերի և՛ տաշելը, և՛ տեղադրելը) միևնույն վարպետին հանձնելու մասին՝ չեն հիմնավորված և չեն կարող ընդունելի համարվել։

Կասկած չի մնում, որ հայկական ճարտարապետության այդ շրջանի կառուցվածքների շինարարական աշխատանքների կազմակերպումը հիմնված է եղել միանգամայն այլ սկզբունքների վրա և, ինչպես կտեսնենք ներքևում, իրականում եղել է շատ ավելի պրոգրեսիվ, քան այդ ենթադրում էր Թորամանյանը։

Այժմ անցնենք Թորամանյանի մյուս դրույթներին։

Ամենից առաջ կանգ առնենք նրա այն տեսակետի վրա, ըստ որի նշանագրերի միջոցով իբր հնարավոր է որոշել տաճարի առանձին մասերից ընկած քարերի սկզբնական տեղերը, մի բան, որ եթե իսկապես այդպես լիներ, մեծապես կդյուրացներ կործանված հուշարձանների վերակառուցման հարցը։ Սակայն, ինչպես ցույց են տալիս իրականում պահպանված հուշարձանները, այդ բնավ էլ այդպես չէ։ Դժվար չէ տեսնել, որ Թորամանյանի այս եզրակացությունը ամենասերտ կերպով շաղկապված էր նրա վերը բերված հիմնական կոնցեպցիային՝ հուշարձանները առանձին մասերի բաժանելու և նրանց ամեն մի մասի քարային բոլոր աշխատանքները մի վարպետի հանձնելու մասին։

Վերը տեսանք, թե ինչքան էր հիմնավորված այդ տեսությունը և կարելի է այստեղ ևս բազմաթիվ օրինակներ բերել՝ ապացուցելու համար, որ համանման նշանագրերի առկայությունը երկու տարբեր քարերի վրա՝ բնավ էլ չի նշանակում, որ դրանք երկուսն էլ պատկանել են միևնույն ճարտարապետական էլեմենտին։

Թորամանյանն այս կապակցությամբ հիշատակում է Զվարթնոցը, սակայն հենց Զվարթնոցից կարելի է բերել տասնյակ օրինակներ, որոնք հիմնավորապես ժխտում են նրա այդ դրույթը։ Անդրադառնանք նույն այդ ասդաձև նշանագրի օրինակին։ Վերը տեսանք, որ այդ նշանագիրը, բացի մույթերի

գոգավոր խորշերից, հանդիպում է արտաքին պատի և՛ ներսի, և՛ դրսի երեսնե-
րում, հուշարձանի շուրջը թափված հարթ սալերի վրա ու շատ այլ տեղերում։
Պարզ է, որ ոչ մի հիմք չկա այս բոլոր քարերը միևնույն կոնստրուկտիվ էլե-
մենտի առանձին մասերը համարել և այդ հիման վրա այսքան հեռու գնացող
եզրակացությունների հանդել։

Նշանագրերի ուսումնասիրության հիման վրա Թորամանյանն առաջ է
բերում նաև մի այլ հարց. դա հուշարձանների տարեգրման հարցն է, որը,
ըստ նրա կարծիքի, հնարավոր է ճշտել հուշարձանների վրա պահպանված հա-
մանման նշանագրերի ուսումնասիրության հիման վրա։

Նշանագրերի համանման ձևերից ելնելով, Թորամանյանը անվերապահո-
րեն ընդունում է, որ Զվարթնոցի նույն սվաստիկաձև նշանագիր ունեցող վար-
պետն է, որ աշխատել է Թարգմանչաց վանքում, իսկ նրա մյուս ընկերները,
որոնք դարձյալ աշխատել են Զվարթնոցում, իրենց ավանդն են մտցրել Գառ-
նահովիտի, Թալինի և այլ եկեղեցիների շինարարության գործում։

Նա գրում է.

«...Նշանագրերի փորագրության կերպը և չափերը այնքան նման են
Զվարթնոցի նշաններին, որ մարդ իրավամբ հակվում է հավատալ, թե ոչ միայն
ժամանակակից են այդ շենքերը, այլև նույն շենքերի մեջ աշխատել են միև-
նույն վարպետները, միայն քարտաշության տարբեր ճյուղի աշխատանքներով»[1]։

Չբացառելով նման դեպքերի հնարավորությունը ժամանակագրական տե-
սակետից մոտ կանգնած հուշարձանների վերաբերյալ, մենք, սակայն, բնավ
համաձայն չենք այս դրույթի խիստ ընդհանրացմանը, որովհետև դրա համար
չկա և ոչ մի կոնկրետ ապացույց։

Բանն այն է, որ համանման նշաններ հանդիպում են միմյանցից շատ հե-
ռու գտնվող և իրենց թվագրումներով խիստ տարբեր ժամանակներում կառուց-
ված հուշարձաններում։ Ավելին. համանման նշանագրեր հանդիպում են և՛
Հայաստանում, և՛ Վրաստանում, և՛ VII դարում, և՛ IX—XI դարերում։
Վերցնենք, օրինակ, հնգաթև աստղ ներկայացնող նշանագիրը։ Այն հանդի-
պում է և՛ ուրարտական Իրեբունի քաղաքում (Արինբերդ), և՛ VII դարի
սկզբներին կառուցված Դվինում, Պտղնիում, Նոր-Կյանքում, Պեմզաշենում,
Գառնահովիտում, Զվարթնոցում, Կոշում, Թարգմանչաց վանքում, VII դարի կե-
սում կառուցված Զորավարում, Թալինի կաթողիկեում, Արուճում, VII դարի
վերջում կառուցված Սիսիանում, և՛, վերջապես, Վրաստանում՝ Ցրոմիում։
Եվ եթե այս նշանի տակ պատկերացնենք միևնույն վարպետին, ապա կստաց-
վի, որ նա շուրջ 100 տարի աշխատել է համարյա թե բոլոր հայկական կառուց-
վածքներում և դեռ ժամանակ է գտել անցնել Վրաստան, այնտեղ ևս աշխատե-
լու համար։ Ինքնին հասկանալի է նման «երկարակեցության» անհնարինությու-
նը և հուշարձանները միայն այդ նշանագրերի հիման վրա տարեգրելու անհիմն
լինելը։ Պարզ է, որ միևնույն նշանագիրը բնավ չի կարելի վերագրել միևնույն
վարպետին։ Համանման նշաններ կարող էին ունենալ ինչպես տվյալ վարպետի
որդիները, որոնց նա իր արհեստն էր սովորեցնում և իր հետ տանում տար-
բեր տեղեր (սրանք էլ հասուն մարդ դառնալով, շրջում էին իրենց որդիների
հետ), և նմանապես միմյանց հետ որևէ առնչություն չունեցող տարբեր վար-
պետներ, լինեն դրանք Հայաստանում, Վրաստանում կամ այլուր։

[1] Թ. Թորամանյան, Նշվ. աշխ., էջ 6։

Բացի այդ, չի կարելի աչքաթող անել նաև հետևյալ հանգամանքը։ Շատ հաճախ նույն նշանագիրը տարբեր հուշարձաններում հանդիպում է միանգամայն տարբեր բնույթի քարերի վրա, և եթե մի տեղ նա հանդիպում է միայն բարդ կոնֆիգուրացիա ունեցող, կորագիծ քարերի վրա, մի այլ հուշարձանում տեսնում ենք նրան փորագրված արդեն հարթ, ամենապարզ տիպի քարերի վրա։ Անշուշտ այստեղ կարող է հարց առաջանալ, թե ինչու՞ եթե նույն վարպետը կարող էր տաշել այսպիսի բարդ, մեծ վարպետություն պահանջող քարեր, ապա ավելի ուշ շրջանում կառուցված մի հուշարձանում նա աշխատել է շատ ավելի պրիմիտիվ, և այստեղից էլ՝ շատ ավելի պակաս աշխատավարձ ապահովող բնագավառում։ Թորամանյանի աչքից չի վրիպել այս հանգամանքը։ Սակայն նա նշում է միայն, որ նույն վարպետը տարբեր հուշարձաններում աշխատել է «...քարտաշության տարբեր ճյուղերի աշխատանքներով», և չի տալիս այդ երևույթի մեկնաբանությունը, մի բան, որը ինչպես տեսանք վերը, ոչ մի բանով չէր կարելի հիմնավորել։ Կասկած չկա, որ այսպիսի դեպքերում տարբեր հուշարձաններում աշխատել են տարբեր մարդիկ, որոնք իրականում ոչ մի առնչություն չեն ունեցել միմյանց հետ։

Ելնելով բերված դրույթներից, կարելի է հանգել հետևյալ հիմնական եզրակացություններին։

Միջնադարյան Հայաստանում շինարարությունը կատարվում էր գործակալների միջոցով, որոնք և աշխատանքի էին հրավիրում որակյալ վարպետների առանձին խմբեր։

Այս հիմնական խմբի մեջ մտնող վարպետների աշխատանքը ամենայն հավանականությամբ հաշվի էր առնվում նույն գործակալի մոտ աշխատող վերակացու-ոստիկանների կողմից և այդ պատճառով էլ վարպետները ստիպված չէին իրենց ամեն մի տաշած քարի վրա հատուկ նշանագրեր փորագրել։

Ինչպես կարելի է եզրակացնել վերը բերված նյութերից, բացի արհեստավորների այսպիսի խմբերից, կային նաև շրջիկ արհեստավորներ, որոնք չէին մտնում որևէ գործակալի խմբի մեջ, այլ շրջում էին երկրովը մեկ, հարմար աշխատանք գտնելու նպատակով։ Մեր կարծիքով, քարերի վրա եղած նշանագրերն էլ պատկանում են հենց այդպիսի շրջիկ քարտաշներին, որոնք նման ձևով առանձնացնում էին իրենց աշխատանքը նույն շինարարության վրա աշխատող, հիմնական խմբի մեջ մտնող քարտաշների աշխատանքից։ Ահա հենց այդ է պատճառը, որ նշանագրեր ունեցող քարերի քանակը այնքան չնչին է, համեմատած նշանագրեր չունեցող քարերի հետ։ Եվ որովհետև որմնադիրների աշխատանքը անջատված էր քարտաշների աշխատանքից, «քարակիրները» քար էին մատակարարում որմնադիրներին՝ առանց որևէ տարբերություն դնելու, թե ո՞ր վարպետի տաշած քարն է այդ, միայն թե քարը ոստիկանի կողմից արդեն ընդունված լիներ և իր չափերով համապատասխաներ պահանջված տեղին։ Ահա այդ պատճառով էլ չպետք է զարմանալ, որ այսօր հուշարձանների պատերի մեջ տեսնում ենք միմյանց կողքին դասավորված և՛ տարբեր նշանագրեր ունեցող, և՛ առանց որևէ նշանագրի քարեր, թեև բոլորն էլ տաշված են հենց այն կոնստրուկտիվ էլեմենտի համար, որտեղ նրանք դրված են այժմ։

Այս ամենի հետ մեկտեղ պետք է նշել նաև, որ որոշ, եզակի դեպքերում միևնույն նշանագիրը հանդիպում է հուշարձանի և՛ ներքևի մասում, և՛ միջին բարձրության վրա, և՛ էլ ավելի բարձր տեղերում։ Այսպիսի դեպքերում պարզ է,

որ հնարավոր չէ վերագրել նրանց շրջիկ վարպետներին, որովհետև տաճարների շինարարության միջին տևողությունը կազմում էր մոտավորապես 5—6 տարի։

Մեր կարծիքով այսպիսի նշանագրեր կարող էին թողած լինել այն վարպետները, որոնք թեև մշտապես աշխատել են շինարարության վրա, սակայն չեն մտել գործակալի հիմնական խմբի մեջ, և անմիջական ծառայության մեջ են եղել հուշարձանի կտիտորի մոտ։

Իրավացիորեն հարց կարող է առաջանալ, իսկ ինչու՞ գործակալի մոտ աշխատող հիմնական խմբի մեջ մտնող վարպետների տաշած քարերի վրա չկան նշանագրեր և ի՞նչպես էր վճարվում նրանց հասանելիք աշխատավարձը։

Վերը տեսանք, որ շրջիկ վարպետների աշխատանքի հաշվառումը կատարվում էր ըստ նշանագրերի, և դժվար չէ եզրակացնել, որ աշխատավարձի վճարումն էլ կատարվում էր պարզ գործավարձային սիստեմի համաձայն, ըստ որում աշխատավարձի չափը ուղղակի պայմանավորված էր արտադրանքի քանակությամբ։

Միանգամայն այլ պայմանների մեջ էրն գտնվում հիմնական խմբի մեջ մտնող վարպետները, որոնք նախնական համաձայնության էին դալիս գործակալի հետ և անշուշտ, պետք է ունենային օրավարձի մի ինչ-որ որոշակի չափ։

Ամենայն հավանականությամբ Հայաստանում ևս, ինչպես և հարևան Փոքր Ասիայում, օգտագործվում էր աշխատանքի այն սիստեմը, ինչ որ հիշատակվում է վերը բերված Գրիգոր Նյուսացու նամակի մեջ։ Այդ նամակից պարզ է դառնում, որ գործավորներին աշխատավարձը վճարվում էր օրավարձով, թեև նրանք ունեին աշխատանքի որոշակի նորմաներ, որոնց կատարումը պարտադիր էր համարվում։ Բացի դրանից, վարպետներն անմիջական նյութական պատասխանատվություն էին կրում և՛ գործատիրոջ կողմից տրված աշխատանքի նպատակահարմար օգտագործման, և՛ թե նույն գործատիրոջ—կտիտորի սեփականությունը հանդիսացող գործիքների անվթարության համար։

Ինչպես տեսանք, գործավորների անմիջական ղեկավարն էր ոստիկանը, որն էլ, ամենայն հավանականությամբ, հետևում էր վարպետների աշխատանքին և հաշվի առնում նրանցից յուրաքանչյուրի արտադրանքը։ Պարզ է, որ ոչ մի անհրաժեշտություն չկար ամեն մի քարի վրա նշանագրեր փորագրել, ըստ որում նշանագրերի առկայությունը կարող էր օգնել տաշած քարերի հաշվառումը դյուրացնելու գործին միայն, մինչդեռ որմնադիրների կատարած աշխատանքի հաշվառման համար նշված մեթոդն արդեն անհնար կլիներ օգտագործել թեկուզ հենց այն պատճառով, որ բոլոր քարերի վրա մինչ այդ արդեն նշանագրեր կլինեին փորագրված։ Այստեղից դժվար չէ եզրակացնել, թե ինչու առհասարակ հիմնական խմբի մեջ մտնող վարպետների և՛ տաշած, և՛ տեղադրած քարերի վրա չկա և ոչ մի նշանագիր։ Շրջիկ քարտաշների տաշած քարերն են միայն, որ ունեն իրենց նշանագրերը։

Մյուս կողմից, նշանագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եթե մի որևէ քարտաշ ավելի հմուտ էր, օրինակ՝ կորագիծ քարեր տաշելու մեջ, ապա նրան էլ հանձնարարվում էր պատրաստել այդ քարերը։ Դրա հետևանքով էլ

---

[1] Վ. Բուստամյանց, նշվ. աշխ., էջ 436։

[2] Նույն տեղում, էջ 437։

տարբեր կոնստրուկտիվ էլեմենտներում կարելի է տեսնել համանման նշանագրեր ունեցող քարերի ոչ մեծ խմբեր (4—6 հատ), դասավորված միմյանց կողքի, թեև հենց նրանց կից արդեն կան և տարբեր նշանագրեր ունեցող, և հատկապես առանց նշանագրերի բազմաթիվ քարեր։

Այստեղից ակնհայտ է դառնում, որ որմնադիրների աշխատանքը, որն առավել պատասխանատու էր, անջատված էր քարտաշների աշխատանքից։

Աշխատանքի կազմակերպման այս ձևը, անշուշտ, շատ ավելի պրոգրեսիվ էր, քան այն, ինչ որ նշվել էր Սիրիայի և Պարսկաստանի համար։ Աշխատանքի կազմակերպման հիշյալ մեթոդի ժամանակ հնարավոր էր շատ ավելի լավ հետևել կառուցվածքի որակին, որովհետև որմնադիրները, որոնք անջատված էին քարտաշներից և պատասխանատու իրենց շարած պատի որակի համար, քարտաշներից կպահանջեին բարձրորակ քարեր, մինչդեռ այն վարպետը, որը պետք է և՛ տաշեր, և՛ շարեր, առանց որևէ դժվարության պատի շարքի մեջ կարող էր թաքցնել տաշված քարի որոշ թերությունները։

Նշված գրույթների հետ լիովին համապատասխան է նաև այն փաստը, որ առանձին, իրենց ծավալով ոչ մեծ հուշարձաններում նշանագրեր կամ բոլորովին չկան, կամ հանդիպում են շատ փոքր քանակությամբ։ Սա նշանակում է, որ այդպիսի կառուցվածքները ամենայն հավանականությամբ սկզբից մինչև վերջ կառուցվել են որևէ գործակալի խմբի կողմից, և շրջիկ վարպետների մասնակցությունն այստեղ եղել է շատ աննշան։

Մի կողմ թողնելով այրուբենի տառերը պատկերող նշանագրերը (որոնցով ամենայն հավանականությամբ սկսվում էին վարպետների անունները), կանգ առնենք առանձին գծիկներից կազմված նշանագրերի վրա։

Գծիկներից կազմված նշանագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առավել պարզ նշանագրերը երկու գծիկով կազմվածներն են։ Դժվար չէ նկատել, որ այստեղ առկա են առհասարակ այն բոլոր դեպքերը, որոնք հնարավոր է ստանալ երկու գծիկների միջոցով։ Համարյա թե նույն բանը կարելի է ասել նաև երեք գծիկներից կազմված նշանագրերի մասին։ Չորս և հինգ գծիկներ ունեցող նշանագրերի յուրահատուկ կողմն արդեն հանդիսանում է որոշակի պարփակ և տպավորվող նշանագրերի ստեղծումը։ Ինչ վերաբերում է 6—8 գծիկներից կազմված նշանագրերին, ապա նրանք հանդիպում են խիստ հազվադեպ, և, անշուշտ, մշակված են եղել այն հաշվով, որ չկրկնեն տվյալ շինարարության վրա արդեն օգտագործվող նշանագրերը։

Որ նշանագրերը նպատակ ունեին միայն դյուրացնել շրջիկ վարպետների կողմից տաշված քարերի հաշվառման գործը, պարզ է դառնում հուշարձանների պատերի վրա նրանց ունեցած բոլորովին պատահական դասավորությունից, և այդ տեսակետից ուսումնասիրվող նշանագրերը բնավ չի կարելի շփոթել միջնադարյան արհեստավորների անհատական դրոշմների հետ, որոնք դրվում էին առանձին իրերի վրա, ցույց տալու համար նրանց պատրաստման վայրը։

Քարտաշ վարպետին անհրաժեշտ էր որևէ կերպ նշել իր կատարած աշխատանքը և նրա համար բնավ որևէ նշանակություն չուներ, թե շենքի որ մասում կդրվեն իր տաշած քարերը։ Ահա այդ է պատճառը, որ այբուբենի տառերի հետ միասին նկատում ենք առավել սարզ երկրաչափական նշանագրերի օգտագործումը, որոնք և՛ կարող էին անցնել սերնդից-սերունդ, և՛ նորից հորինվել ամեն մի նոր շինարարության ժամանակ, խուսափելու համար համանման նշանների օգտագործումից, քանի որ տվյալ շինարարության վրա

կարող էին հանդիպել մեկից ավելի շրջիկ քարտաշներ, որոնք ունենալին նույն նշանագրերը։

Այն հանգամանքը, որ նշանագրերում մեզ հանդիպում են զգալի քանակությամբ հայկական այբուբենի տառեր, ընդ որում դրանք բոլորն էլ լավ գծագրված են և իրենց կատարման որակով բնավ ետ չեն մնում նույն դարաշրջանի արձանագրությունների մեջ օգտագործվող տառերից, որոշ հիմքեր է տալիս մտածելու, որ հին Հայաստանում, նույնիսկ հասարակ ժողովրդի մեջ, սովորական քարտաշների շրջանում զգալի էր գրագետների տոկոսը։ Ինքնին հասկանալի է, որ անգրագետ քարտաշը որպես նշանագիր չէր ընտրի այբուբենի որևէ տառ, և անշուշտ, կգերադասեր գծիկներից կազմվածը։

Մյուս կողմից, այն բանը, որ նշանագրերում հանդիպում են միայն հայկական այբուբենի տառեր, վկայում է ինչպես VII դարի հայկական հուշարձանները կառուցող վարպետների ազգային պատկանելիության, այնպես էլ ուրիշ երկրներից վարպետներ հրավիրելու սովորության բացակայության մասին։ Դրա հետ մեկտեղ, այն փաստը, որ հայկական այբուբենի տառերով նշանագրեր հանդիպում են նաև Հայաստանի սահմաններից դուրս (Վրաստան, Աղվանք) ինքնին արդեն վկայում է հայ վարպետների շինարարական գործունեության մասին նաև հարևան երկրներում։

* * *

Նշանագրերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բարձրացնելու վաղ միջնադարի արհեստներին վերաբերող ևս մի հարց։ Բանն այն է, որ առավել հնագույն կառուցվածքներում (Քասաղ, Երերույք և V դարի այլ բազիլիկ կառուցվածքներ) նշանագրեր համարյա թե չկան, կամ հանդիպում են ամբողջ շենքում ընդամենը 2—3 հատ, մինչդեռ VII դարի հուշարձաններում նրանց քանակը հասնում է մի քանի տասնյակի։ Այս հանգամանքը անշուշտ պատահական չէր կարող լինել և ամենասերտ կերպով պետք է որ կապված լիներ շինարարական գործի կազմակերպման մեջ տեղի ունեցած փոփոխությունների հետ։

Հայ ժողովրդի III—IV դարերի պատմության մեջ խիստ ուշագրավ է IV դարի կեսերից սկսված այն պայքարը, որն ընթանում էր մի կողմից կենտրոնախույս նախարարների, մյուս կողմից՝ կենտրոնական իշխանության միջև։ Կենտրոնական իշխանության հիմնական հենարաններն էին քաղաքները և քաղաքային համայնքները, որոնց կործանումը 364—368 թթ. պարսկական արշավանքների ժամանակ նախադրյալներ ստեղծեց կենտրոնական իշխանության վերացման և երկրի առանձին մասերի սահմանափակության ու մասնատվածության էլ ավելի ուժեղացման համար։

387 թ. Հայաստանի բաժանումը ավելի ևս ամրապնդեց երկրի ֆեոդալական մասնատվածությունը։ Նախարարական տների սահմանազատումը լիովին բխում էր Հայաստանի մեծ մասը գրաված Պարսկաստանի շահերից, և բնավ պատահական չէ, որ պարսիկները հենց սկզբից էլ օրինականացրին նախարարների ժառանգական իրավունքները, և նախարարական տները դարձան ինքնամփոփ ու կիսանկախ, ունեին իրենց զորքը, իրենց եպիսկոպոսությունները, տոհմային զինանշանները և այլն։

Երկրի այսպիսի մասնատվածությունը չէր կարող իր ազդեցությունը չունենալ արհեստների և ճարտարապետության զարգացման վրա։ Բնական է,

որ յուրաքանչյուր նախարարական տուն իր տերիտորիայում կատարվող շինարարությունը պետք է ձգտեր կատարել իր միջոցներով, իր վարպետների, իր աշխատավորների ձեռքերով։ Ահա այս իրադրությունն էլ իր որոշակի կնիքն է թողել նաև IV—V դարերի շենքերի, բաղիլիկ կառուցվածքների վրա, որոնց պատերին համարյա թե իսպառ բացակայում են քարտաշ վարպետների նշանները, և եթե հանդիպում էլ են, ապա նրանց քանակությունը շատ չնչին, աննշան տոկոս է կազմում նշանագրեր չունեցող քարերի քանակության համեմատությամբ։

Այս հանգամանքը, անշուշտ, պատահական չէ և, մեր կարծիքով, վկայում է շրջիկ վարպետների բացակայության մասին, մի բան, որը լիովին համապատասխանում էր երկրի տնտեսական-քաղաքական իրադրությանը, երբ ինքնամփոփ ու սահմանափակ նախարարական տների առկայությունը ոչ մի նախադրյալ չէր ստեղծում ազատ կերպով շրջող արհեստավորների գոյության համար։

Սակայն հայ ժողովրդի համառ պայքարը օտար բռնապետության լծից ազատագրվելու ուղղությամբ, 450—451 և 481—484 թթ. ազատագրական ապըստամբությունները որոշակի արդյունքների հասան, և պարսկական գերիշխանությունը փաստորեն դարձավ նոմինալ։ Սկսվեց խաղաղ զարգացման մի շրջան, որը շարունակվեց մինչև VI դարի կեսը։ Զարգացան քաղաքները, հատկապես Դվինը, որը երկրի արհեստագործական արտադրության գլխավոր կենտրոնն էր։

Առևտրի զարգացումը, Հայաստանի մասնակցությունը միջազգային առևտրին՝ զգալիորեն նվազեցրին երկրի առանձին մասերի մասնատվածությունը։ Քաղաքական իրադրության զարգացումն իր հերթին նույնպես խոշոր չափով թուլացրեց առանձին նախարարական տների ինքնամփոփ վիճակը։ Այս հանգամանքը հատկապես նկատելի է Արևմտյան Հայաստանում, որտեղ բյուզանդական կայսրությունն անում էր ամեն ինչ՝ Հայաստանը կայսրության մի սովորական մարզը դարձնելու համար։

Նույնանման պատկեր տեսնում ենք նաև Արևելյան Հայաստանում, ուր պարսից Խոսրով Առաջին Անուշիրվանի (531—578) ռազմա-վարչական ռեֆորմները դարձյալ ուժեղ հարված էին նախարարական տների սահմանափակվածությանը։ Մյուս կողմից, այն հանգամանքը, որ հարկահավաքությունը այժմ կատարվում էր ոչ թե բնամթերքով, այլ դրամով, ուժեղացրեց գյուղական համայնքի քայքայման պրոցեսը և զգալիորեն ավելացավ դրամ վաստակելու նպատակով դեպի քաղաք ձգտող գյուղացիների թիվը։

Այս ամենը, անշուշտ, բարենպաստ պայմաններ էր ստեղծում արհեստների հետագա զարգացման համար, և միանգամայն տրամաբանական է, որ հարմար աշխատանք որոնելու նպատակով արհեստավորները կարող էին շրջել քաղաքից-քաղաք, երկրի մի մասից մյուսը, ընդ որում, այս տեսակետից, առանձնահատուկ պայմանների մեջ էին գտնվում քարտաշները, որոնք իրենց մասնագիտության սպեցիֆիկ կողմերից ելնելով, արդեն չէին կարող մշտապես կապված լինել միևնույն աշխարհագրական վայրի հետ և պետք է մեկնեին այնտեղ, որտեղ որ ձեռնարկվում էր որևէ նշանակալից շինարարություն։ Ահա այս հանգամանքն էլ, անշուշտ, իր որոշակի դրսևորումն է գտել շինարարական աշխատանքների կազմակերպման գործում, և այդ պրոցեսի մի ակնհայտ արտահայտությունն էլ, մեր կարծիքով, հանդիսանում է նշանագրերի քանակության խիստ աճը, որը նկատվում է VI—VII դարերի հուշարձաններում։

* * *

Վերը բերված նյութերի հիման վրա կարելի է հանդել հետևյալ եզրակացությունների.

1. Միջնադարյան Հայաստանում կուլտային կառուցվածքների շինարարության նկատմամբ սահմանված է եղել մի որոշակի վերահսկողություն։ Եկեղեցական իշխանությունների կողմից հաստատման ենթակա էին ոչ միայն եկեղեցիների, վկայարանների տեղաբաշխման, այնտեղ տեղադրվող մասունքների վավերականության հարցերը, այլև ապագա կառուցվածքների ընդհանուր ճարտարապետական ձևերը։

2. Շինարարությունը կատարվում էր գործակալների միջոցով, որոնք և անմիջական բանակցություններ էին վարում տարբեր մասնագիտության վարպետների խմբերի հետ։ Առանձին դեպքերում, որպես գործակալներ, հանդես էին գալիս իրենք՝ ճարտարապետները։

3. Շինարարական աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը իրականացնում էր ճարտարապետը։ Նախքան աշխատանքները սկսելը նա պատրաստում էր կառուցվածքի մոդելը։ Աշխատանքներն սկսելուց առաջ ճարտարապետը լարի միջոցով նշվարկում էր կառուցվածքի չափերը, իսկ հետագայում, արդեն քարային աշխատանքների ժամանակ, քանոնի և ինչ-որ սուր գործիքի միջոցով նշվարկում բոլոր կոնստրուկտիվ հանգույցները, զարդաքանդակների, խոյակների, իարիսխների և այլ մանրամասների տեղերը։

4. Գործակալին անմիջականորեն ենթարկվում էին ոստիկանները, որոնք հետևում էին շինանյութերի ծախսմանը և ընդունում վարպետների կատարած աշխատանքը։

5. Շինարարական բոլոր հիմնական աշխատանքները կատարվում էին «դասերի» բաժանված վարպետների կողմից։ Ամենայն հավանականությամբ գոյություն ունեին քարտաշների, որմնադիրների և շաղախ պատրաստողների «դասեր»։ Բացառված չէ, որ առանձին «դաս» կազմեին նաև փոխագրական աշխատանք կատարող «անարուեստ գործաւորները»։

6. «Դասերը» ղեկավարում էին տվյալ մասնագիտության առավել որակյալ վարպետները, որոնք հետևում էին աշխատանքների որակին և ճարտարապետի ցուցմունքների համաձայն՝ պատրաստում առավել բարդ կոնֆիգուրացիա ունեցող քարերի նախօրինակները, որոնց հիման վրա արդեն մյուս քարտաշները պատրաստում էին շինարարության մեջ օգտագործվելիք քարերը։

7. Շինարարության վրա, բացի գործակալի հիմնական խմբի մեջ մտնող վարպետներից, աշխատում էին նաև շրջիկ վարպետներ, որոնք կարող էին ընդունվել և արձակվել եղած պահանջի համաձայն։ Բացի շրջիկ վարպետներից շինարարության վրա աշխատում էին նաև այնպիսիները, որոնք չմտնելով գործակալի կողմից հավաքագրած հիմնական խմբի մեջ, ծառայում էին կտիտորի մոտ։ Բացառված չէ, որ նշանագրերի մի մասը պատկանում է հենց այս կարգի վարպետներին։ Գործակալի հիմնական խմբի մեջ չմտնող վարպետներին աշխատավարձ վճարվում էր նրանց տաշած քարերի քանակին համապատասխան, և նրանց կատարած աշխատանքը հաշվի էր առնվում առանձին։ Այդ է պատճառը, որ նրանք իրենց տաշած քարերի վրա դնում էին հատուկ նշանագրեր։

8. Գործակալի մոտ աշխատող հիմնական խմբի մեջ մտնող վարպետների աշխատավարձը վճարվում էր օրավարձային սիստեմով, թեև նրանք ունեին իրենց որոշակի աշխատանքային նորմաները և նյութական պատասխանատվություն էին կրում թե՛ շինանյութերի նպատակահարմար օգտագործման, և թե՛ գործատիրոջ գործիքների անվթարության համար։ Այս խմբի մեջ մտնող և՛ քարտաշների, և՛ որմնադիրների աշխատանքը հաշվի էր առնվում ոստիկանների կողմից, և հենց այդ պատճառով էլ վարպետները ստիպված չէին ամեն մի քարի վրա նշանագիր փորագրել։

9. Քարտաշների աշխատանքը լիովին անջատված էր որմնադիրների աշխատանքից։ Վերջիններիս քար էին մատակարարում հատուկ «քարկիրները» առանց որևէ տարբերություն գնելու, թե տվյալ քարը տաշված է հիմնական խմբի մեջ մտնող վարպետի՞, թե այդ խմբի մեջ չմտնող վարպետի կողմից, միայն թե քարն ունենար համապատասխան չափեր և ընդունված լիներ ոստիկանի կողմից։ Այստեղից էլ նշանագրերի այն պատահական դասավորությունը, որը նկատվում է այդ շրջանի բոլոր հուշարձաններում անխտիր։

10. IV—V դարերում կառուցված հուշարձաններում նշանագրերի խիստ սակավաթիվ լինելը և, ընդհակառակը, նրանց քանակության զգալի աճը VI—VII դարերի հուշարձաններում, ամենասերտ կերպով կապված են V դարի վերջից երկրում սկսված սոցիալ-տնտեսական տեղաշարժերի հետ ընդհանրապես և նույն այդ շրջանում արհեստների զարգացման մեջ նկատվող մի նոր աստիճանի հետ՝ մասնավորապես։

VI—VII դարերի նշանագրեր



№ 1 —Պտղնի, Պեմզաշեն, Մայիսյան, Զվարթնոց, Արամուս, Արուճ, Գառնահովիտ, Սիսիան, Թալին (փոքր), Թալին (կաթողիկե), Յրոմի (Վրաստան)։ № 2— Պտղնի, Արամուս, Զվարթնոց, Թալին (կաթողիկե), Գառնահովիտ։ № 3— Պտղնի, Արամուս, Գայանե, Զվարթնոց, Պեմզաշեն, Գառնահովիտ, Թալին (փոքր), Թալին (կաթողիկե), Սիսիան։ № 4—Գայանե, Զվարթնոց, Մայիսյան, Թալին (փոքր), Սիսիան։ № 5— Պտղնի, Արամուս, Գառնահովիտ, Սիսիան։ № 6—Արամուս, Գայանե, Զվարթնոց, Իրինդ, Թալին (կաթողիկե)։ № 7—Պտղնի։ № 8—Գայանե, Սիսիան։ № 9—Զվարթնոց։ № 10— Թալին (կաթողիկե)։ № 11— Զվարթնոց, Գառնահովիտ։ № 12— Պտղնի, Զվարթնոց։ № 13— Զվարթնոց։ № 14— Զվարթնոց։ № 15— Զվարթնոց։ № 16— Պտղնի։ № 17—Արուճ, Գառնահովիտ։ № 18—Պտղնի, Դվին, Զորավար, Պեմզաշեն, Մայիսյան, Իրինդ, Գառնահովիտ, Սիսիան, Արուճ։ № 19—Գայանե։ № 20—Զվարթնոց։ № 21—Դվին։ № 22—Կոշ։ № 23—Զվարթնոց։ № 24—Դվին։ № 25—Գայանե։ № 26— Գառնահովիտ։ № 27—Գառնահովիտ։ № 28— Պտղնի, Արուճ, Յրոմի (Վրաստան)։ № 29—Մայիսյան։ № 30— Պտղնի։ № 31—Դվին, Արամուս, Թալին (փոքր), Թալին (կաթողիկե), Սիսիան։ № 32—Պտղնի, Զվարթնոց, Թալին (փոքր), Մայիսյան, Իրինդ, Գառնահովիտ, Զվարի (Վրաստան), Յրոմի (Վրաստան)։ № 33—Արամուս, Գառնահովիտ։ № 34—Զվարթնոց։ № 35—Արամուս, Գայանե, Գառնահովիտ։ № 36— Արամուս։ № 37— Զվարթնոց։ № 38— Պտղնի, Թալին (փոքր), Սիսիան։ № 39— Գառնահովիտ։ № 40— Գառնահովիտ։

№ 41—Սիսիան։ № 42—Զվարթնոց, Թալին (փոքր), Գառնահովիտ։ № 43—Զվարթնոց։ № 44—Պտղնի, Արամուս, Սիսիան, Զվարթնոց, Պեմզաշեն, Գայանե, Արուճ, Թարգմանչաց, Յրոմի (Վրաստան)։ № 45—Պտղնի, Արամուս, Զվարթնոց, Գայանե, Պեմզաշեն, Թարգմանչաց, Կոշ, Զորավար, Թալին (կաթողիկե), Գառնահովիտ, Սիսիան, Արուճ, Նոր Կյանք, Յրոմի (Վրաստան)։ № 46—Թալին (փոքր)։ № 47—Սիսիան։ № 48—Պտղնի, Գայանե, Զվարթնոց, Պեմզաշեն, Թալին (փոքր), Գառնահովիտ, Սիսիան, Յրոմի (Վրաստան)։ № 49—Արուճ։ № 50—Մայիսյան։ № 51—Պտղնի, Գայանե, Զվարթնոց, Նոր Կյանք, Արուճ։ № 52—Պտղնի։ № 53—Գառնահովիտ։ № 54—Արամուս։ № 55—Գայանե։ № 56—Գառնահովիտ։ № 57—Թարգմանչաց, Սիսիան։ № 58—Գառնահովիտ, Սիսիան։ № 59—Գառնահովիտ։ № 60—Թալին (կաթողիկե)։ № 61—Իրինդ։ № 62—Իրինդ։ № 63—Արուճ։ № 64—Արուճ, Թալին (կաթողիկե)։ № 65—Արուճ, Սիսիան։ № 66—Պտղնի, Դվին, Արուճ։ № 67—Դվին։ № 68—Պտղնի։ № 69—Թարգմանչաց։ № 70—Պտղնի։ № 71—Պտղնի։ № 72—Պտղնի։ № 73—Պտղնի։ № 74—Պտղնի։ № 75—Պտղնի։ № 76—Գառնահովիտ։ № 77—Դվին, Կոշ, Զվարթնոց, Պեմզաշեն, Թալին (փոքր), Թալին (կաթողիկե), Սիսիան։ № 78—Զվարթնոց, Մայիսյան, Զորավար։ № 79—Պտղնի, Գայանե, Զվարթնոց, Թալին (կաթողիկե), Սիսիան։ № 80—Պտղնի, Արամուս, Զվարթնոց։ № 81—Զվարթնոց, № 82—Սիսիան։ № 83—Պտղնի, Սիսիան։ № 84—Զվարթնոց, Պեմզաշեն, Թալին (կաթողիկե)։ № 85—Պտղնի, Թալին (փոքր), Թալին (կաթողիկե), Սիսիան։ № 86—Զորավար, Սիսիան։ № 87—Սիսիան։ № 88—Պտղնի։ № 89—Պտղնի, Գայանե, Պեմզաշեն, Սիսիան։ № 90—Պեմզաշեն։ № 91—Գայանե։ № 92—Պեմզաշեն, Թալին (կաթողիկե), Սիսիան։ № 93—Մայիսյան, Պեմզաշեն։ № 94—Կոշ, Զորավար, Գառնահովիտ։ № 95—Պեմզաշեն։ № 96—Պեմզաշեն, Գառնահովիտ։ № 97—Պտղնի։ № 98—Գառնահովիտ, Պեմզաշեն։ № 99—Թալին (փոքր)։ № 100—Թալին (կաթողիկե)։ № 101—Գառնահովիտ, Սիսիան։ № 102—Արուճ։ № 103—Գայանե։ № 104—Պտղնի, Պեմզաշեն, Գառնահովիտ, Կոշ, Մայիսյան, Թալին (փոքր), Թալին (կաթողիկե), Սիսիան։ № 105—Գառնահովիտ։ № 106—Գառնահովիտ։ № 107—Սիսիան։ № 108—Սիսիան։ № 109—Սիսիան։ № 110—Սիսիան։ № 111—Սիսիան։ № 112—Սիսիան։

IX դարի վերջի և X դարի սկզբի նշանագրեր



№ 1—Շողագավանք։ № 2—Շողագավանք։ № 3—Շողագավանք. № 4—Շողագավանք, Կոթավանք, Մաքենյաց վանք, Բյուրական։ № 5-Շողագավանք, Կոթավանք, Քոլատակի ս. Աստվածածին, Մաքենյաց վանք։ № 6—Շողագավանք, Կոթավանք, Մաքենյաց վանք, Տաթև, Բյուրական։ № 7—Շողագավանք, Քոլատակի ս. Աստվածածին, Մաքենյաց վանք, Բյուրական։ № 8—Կոթավանք։ № 9—Կոթավանք, Մաքենյաց վանք, Տաթև։ № 10—Կոթավանք։ № 11—Կոթավանք։ № 12—Քոլատակի ս. Աստվածածին։ № 13—Քոլատակի ս. Աստվածածին։ № 14—Մաքենյաց վանք։ № 15—Մաքենյաց վանք։ № 16—Մաքենյաց վանք։ № 15—Մաքենյաց վանք։ № 16—Մաքենյաց վանք։ № 17—Մաքենյաց վանք։ № 18—Մաքենյաց վանք, Տաթև։ № 19—Կոթավանք։ № 20—Մաքենյաց վանք։ № 21—Մաքենյաց վանք։ № 22—Մաքենյաց վանք։ № 23—Մաքենյաց վանք։ № 24—Տաթև։ № 25—Տաթև։ № 26—Տաթև։ № 27—Տաթև, Բյուրական։ № 28—Տաթև, Բյուրական։ № 29 Տաթև։ № 30—Տաթև։ № 31—Տաթև։ № 32—Տաթև և № 33—Տաթև։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОРГАНИЗАЦИИ СТРОИТЕЛЬНОГО ДЕЛА СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ И ЗНАКИ МАСТЕРОВ-КАМЕНОТЕСОВ

Ст. Х. МНАЦАКАНЯН

(Резюме)

Вопросы, связанные со строительной техникой и, в особенности, с организацией строительного дела в средневековой Армении, изучены очень мало. Сравнительное изучение сохранившихся исторических материалов и знаков мастеров-строителей на памятниках зодчества приводит к следующим выводам:

1. В средневековой Армении существовал определенный надзор за строительством культовых зданий, осуществлявшийся церковными властями.

2. Строительство велось с помощью горцакалов (приказчиков), которые вели переговоры с мастерами разных специальностей.

3. Общее руководство строительством принадлежало зодчему, который изготовлял модель будущего здания.

4. Горцакалу подчинялись надзиратели (востиканы), следившие за расходованием строительных материалов и принимавшие выполненную мастерами работу.

5. Все основные строительные работы велись мастерами, которые делились на группы («дасы») — каменотесов, каменщиков-кладчиков и изготовителей раствора.

6. «Дасами» руководили опытные мастера данной специальности.

7. На строительстве работали и странствующие мастера. Они не входили в основную группу и нанимались и увольнялись по мере надобности. Не входили в основную группу и мастера, служившие у ктитора. Возможно, что часть сохранившихся на памятниках знаков принадле-

жит последним. Они получали заработную плату отдельно от мастеров основной группы, по числу сработанных камней, поэтому ставили на них свои знаки.

8. Работавшие у горцакала мастера получали плату поденно, хотя имели определенные нормы выработки. Их работа учитывалась востиканами, и поэтому они не ставили свои знаки на каждом сработанном камне.

9. Работа каменотесов была отделена от работы кладчиков. Последние получали сработанные камни через носильщиков («каркиры»). Они подавали камни независимо от того, какими мастерами они сработаны, чем и объясняется случайное расположение знаков на памятниках.

10. Очень ограниченное количество камней со знаками мастеров в IV—V веках и обилие их в VI—VII веках объясняется социально-экономическими сдвигами, которые наблюдались в стране с конца V века, и развитием в этот период ремесел.